ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ՊԱՏԻԺ

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Կարգապահությունն ավելի լայն հասկացություն է, ներառում է նաև դրական կողմեր, խրախուսանքներ, գովեստ և այլն:
- Կարգապահությունը սովորեցնում է և ուղղորդում:
- Կարգապահությունը օգնում է երեխային հասնել ներքին պատասխանատվության, կարողանալ ընտրություն կատարել սեփական արարքների միջև, գիտակցել դրանց հետևանքները:
- Կարգապահությունը սովորեցնում է հարգել և երկխոսության մեջ մտնել մեծահասակի հետ:

Ծնողները հաճախ ունենում են իրենց հետ ավելորդ բեռ՝ մանկությունից եկած դիրքորոշումներ, ծնողների մոդելներ, որոշակի համոզմունքներ, վախեր և տագնապներ, ուրիշների աչքերում լավ երևալու ցանկություն և այլն:

Ծնողները պետք է վերանայեն սեփական դիրքորոշումները,
վերհիշեն սեփական մանկական փորձը:
Պետք է գիտակցեն, թե ինչը հենց իրենց դուր չի եկել մանկական տարիքում, որ դեպքերում են նրանք մտածել, որ հենց այսպես երբեք չեն վարվի իրենց երեխայի հետ:
Պետք է կարողանան <<տեսնել>> երեխային, նրա անձը,



բնավորությունը, սովորությունները և կիրառեն այնպիսի կարգապահական տույժեր կամ խրախուսանքներ, որ օգտակար կլինեն հենց տվյալ փոքրիկին:

ՊԱՏԻԺ

- Պատիժը թելադրանք է. այն միայն ցույց է տալիս երեխային, թե ինչ չի կարելի անել:
- Պատժի դեպքում ծնողը չի ասում, թե ինչ կարելի է անել անցանկալի վարքի փոխարեն, այլ միայն մատնանշում է վատը և պատժում դրա համար:
- Պատիժը թույլ չի տալիս երեխային գիտակցել իր սխալը, գտնել դրա լուծումներն ու այլ տարբերակները, ճանաչել սեփական հնարավորությունները:
- Պատիժը սովորեցնում է երեխային հետևել արտաքին վերահսկողությանը, անել կամ չանել որևէ բան՝ առաջնորդվելով շրջապատի ստեղծած կանոնների համաձայն:
- Պատիժը սովորեցնում է երեխային վախենալ ազդեցիկ մեծահասակից:
- Պատիժը սերմանում է վախ, ցածր ինքնագնահատական, ճնշվածություն, ինչը կարող է նաև հիմք դառնալ բարձր ագրեսիվության, դաժանության, վրեժխնդրության:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐՆԵՐ

Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ

- ճանաչել երեխայի տարիքային առանձնահատկությունները, հասկանալ,թե ինչ կարելի է սպասել տվյալ երեխայից տվյալ տարիքում
- յուրաքանչյուր երեխայի համար հաստատել իր ուրույն կանոնը
- վերանայել և հարմարեցնել երեխայի հանդեպ կիրառվող կարգապահական մոտեցումները նրա զարգացմանը զուգընթաց
- պարբերաբար վերանայել կարգապահական մոտեցումները

ԻՆՉ ՉՊԵՏՔ Է

- խոսել երեխայի անձից. ծնողները պետք է սովորեն խոսել երեխայի կոնկրետ արարքներից
- համեմատել ուրիշների հետ
- նսեմացնել երեխային՝ <<քեզանից մարդ դուրս չիգա>>, <<ծնվել ես, որ միայն մեզ խայտառակես>> և այլ նմանատիպ արտահայտություններ
- երկարատև քարոզներ, բարոյախրատական զրույցներ վարել, հարվածել, ծեծել, հայհոյել երեխային

ՔԱՅԼԵՐ

- ցանկացած կարգապահական միջամտությանը պետք է նախորդի նախազգուշացում
- կարգապահական միջամտությանը ունի սկիզբ և ավարտ
- իրականացվում է տեղին և ժամանակին, չպետք է լինի հետաձգված
- իրականացվում է ցանկացած դեպքում, անկախ երեխայի գտնվելու վայրից
- ասվում է հստակ, հաստատակամ ձայնով, իրականացվում հետևողական
- իրականացվում է ամեն անգամ, երբ ի հայտ է գալիս անցանկալի վարք
- մշտապես ուղեկցվում է այլընտրանքների բացատրությամբ, որոնք կարելի էր իրականացնել անցանկալի վարքի փոխարեն

ԵՐԵՔ ԿԱՐԵՎՈՐ «ՊԵՏՔ Է»

- պետք է տրամաբանորեն կապված լինեն երեխայի արարքի հետ
- պետք է համապատասխան լինեն երեխայի իրականացված անցանկալի վարքին
- պետք է լինեն կառուցողական

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: